ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՌՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
26.01.2024 թ.-ի №219 որոշմամբ:

ՀՌՀ ՌԵԿՏՈՐ Է.Մ.ՍԱՆԴՈՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՈՒՍՄՈՒՆՔ» ԴՊՐՈՑԻ 2024-2030 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան..... 2

1.1 Հաստատության գործունեություն..... 3

1.2 Իրավիճակի վերլուծություն 6

1.3 Նպատակների և խնդիրների սահմանում 14

1.4 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց, պատասխանատուներ..... 18

1.5 Արդյունքների գնահատման չափանիշներ..... 24

1.6 Ռիսկեր..... 26

1.7 Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ/իրավական, ֆինանսական/ 26

Նախաբան

Հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը, որը հաստատության 5 տարվա ռազմավարական փաստաթուղթն է, ընդգրկում է մի շարք էական բաղադրիչներ. մասնավորապես՝ հաստատության գործունեություն, իրավիճակի վերլուծություն, նպատակների և խնդիրների սահմանում, նպատակների իրականացումն ապահովող միջոցառումների հաջորդականություն ու ժամանակացույց, պատասխանատուներ, արդյունքների գնահատման չափանիշներ, ռիսկեր, բյուջեյի վերահսկողության մեխանիզմներ:

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս պարտադիր է նաև հաստատության դպրոցի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, հիմնախնդիրների ձևակերպումը, դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների նկարագրությունը, ֆինանսավորման մեխանիզմները և այլն: Յուրաքանչյուր գործողության համար պետք է կատարվի նաև ֆինանսական հաշվարկ՝ նշելով ֆինանսավորման աղբյուրը:

Զարգացման ծրագիրը հաստատում և դրա իրականացման ընթացքը վերահսկում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված աշխատանքային պլանների կատարողականների հաստատման միջոցով: Այդ նպատակով կառավարման խորհուրդը տարեկան առնվազն երկու անգամ քննարկում է ծրագրի դրույթների կատարողականները՝ տալով համապատասխան գնահատականներ, տնօրենին ապահովելով շարունակական խորհրդատվությամբ և այլ աջակցությամբ:

Սույն զարգացման ծրագիրը մշակվել է
ՀՀ ԿԳՄՄՆ 22 սեպտեմբերի 2022թ. 35-Ն հրամանի
Հավելվածի պահանջներին համաձայն

1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Դպրոցը պարտավոր է կրթել անհատ, ով ներկայացնում է ընտանիք, սերունդ, քաղաք, երկիր, պետություն:

Հայ-Ռուսական համալսարանի «Ուսմունք» դպրոց ՍՊԸ 2024-2030թ.թ. զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- Աշխատանքային օրենսգիրք
- «Կրթության մասին » ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ, կարգեր
- ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիրը

Դպրոցի գործունեության առարկան հանրակրթական հիմնական (ընդհանուր) և հանրակրթական լրացուցիչ ծրագրերի իրականացումն է:

Դպրոցի գործունեության նպատակը սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման, անհատի բազմակողմանի զարգացման, նրա առողջության պահպանման, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծման ապահովումն է:

Դպրոցը հիմնադրվել է 2009 թվականին՝ որպես Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի «Ուսմունք» դպրոց ՍՊԸ /պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 03 Ա 085629/ :

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ ք.Երևան, Հ.Էմինի նրբ. 4, հեռ. +374-10-20-16-11:

Դպրոցն ունի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:

Դպրոցի էլեկտրոնային հասցեն և կայքը՝ usmunk@rau.am, usmunk.rau.am:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

«Ուսմունք» դպրոցը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է /առևտրային կազմակերպություն/, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

1. Տարրական հանրակրթական ծրագիր - Լիցենզիա Ա N 0018, 12.10.2010թ. /180 տեղ/
2. Միջնակարգ հանրակրթական ծրագիր - Լիցենզիա Ա N 0232, 12.07.2011թ. /200 տեղ/
3. Հիմնական հանրակրթական ծրագիր - Լիցենզիա Ա N 0838, 17.04.2012թ. /200 տեղ/:

Դպրոցը հիմնվել է 2009թ.՝ որպես հայկական հանրակրթական դպրոց: Դպրոցը 2013թ. ունի նաև ռուսերենով ուսուցմամբ դասարաններ բացելու թույլտվություն՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի N04/07.1/17-13 հրամանի, տրված՝ 05.01.2012թ.:

2023-2024 ուստարում դպրոցում սովորողների թիվը 431 (տարրական օղակ՝ 200 աշակերտ, միջին օղակ՝ 155, ավագ դպրոց՝ 76 աշակերտ) և ֆիզմաթ. 88 է: Սովորողների խտությունը դասարաններում 13.4 է: Դպրոցում դասարանների թիվը 41 (տարրական՝ 15, միջին՝ 13, ավագ՝ 8, ֆիզմաթ.՝ 5) է:

Դպրոցում աշխատում է 60 ուսուցիչ՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ: Կին ուսուցիչներ՝ 54, տղամարդ ուսուցիչներ՝ 6: Նրանցից 3-ն մասնակցել են կամավոր ատեստավորման և հավաքել բարձր միավորներ:

Կառավարման խորհուրդը կազմված է 17 անդամից /Գիտական խորհրդի որոշում N175, 08.09.2023թ/: Խորհրդի նախագահն է ՀՌՀ-ի ռեկտոր Է. Սանդոյան:

Մանկավարժական խորհուրդը կազմված է 43 անդամից:

Աշակերտական խորհուրդը կազմված է 16 անդամից:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները:

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Ուսմունք» դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար ուսումնասիրելով դպրոցի մասին ողջ տեղեկատվությունը վերենահանվել դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու հնարավոր խոչընդոտները՝ այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդիրների լուծման ընթացքում:

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1.Դպրոցիգործունեությունըկանոնակարգողիրավականակտեր /դպրոցիկանոնադրություն, տեղայնացվածօրինակելիիրավականակտեր, ներքինիրավականակտեր, դրանցվարումը/	
• Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշ փաստաթղթերը, այդթվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն • ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատաս-խանեցված են դպրոցի կառուց-վածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան • Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու	
2. Դպրոցի շենքային պայմաններ	
• Դպրոցը ունի ընդհանուր 5000 քմ հարակից տարածք • հիմնանորոգված 2 երկհարկանի մասնաշենք, տուֆակերտ • հաստատության տարածքը կանաչապատ է, ցանկապատված և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար • տեսախցիկների առկայությունը	• Դասասենյակները նախատեսված են 12 աշակերտի համար • Դպրոցը չունի՝ • Հարմարեցված ապաստարան • նկուղ • գրադարանի, ընթերցասրահի, միջանցքներում հանգստյան գոտիների կահավորվածություն

դպրոցի միջանցքներում և բակում • տարածքի ընդարձակությունը, դասասենյակների լուսավորվածությունը • առկաէ 26 դասասենյակ հիմնական շենքում, 13 դասասենյակ ՀՈՒՀ-ի շենքում • ընդարձակ մարզահրապարակ • առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր • հաստատությունը ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, դասասենյակներում, միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ՝ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ջերմաստիճանով • առկաէբուժկետ, որտեղկարող է տրամադրվելառաջինբուժօգնությունը • երգ-երաժշտության դասասենյակ • պարի սենյակ • գրադարան • լոգոպեդի սենյակ • շախմատի դասասենյակ • ինֆորմատիկայի դասասենյակ • տնտեսվարիսենյակ, տնտեսական սենյակ, պահնորդի սենյակ • 1 ճաշարան	
3. *Ուսումնական միջավայրը*	
• Դպրոցը ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով, որոշ քանակի էլեկտրոնային գրատախտակներով և պրոյեկտորներով • Դպրոցն ունի բարեկարգ մարզահրապարակ	Դպրոցը չունի՝ • քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ, աշխարհագրության կաբինետ • հանդիսությունների դահլիճ • մարզադահլիճ • նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական դասարաններ ՆԶՊ /իր զենքի պահոցով, էլեկտրոնային հրաձգարանով/,

	Ինֆորմատիկա • ոչ բոլոր դասարաններն են ապահովված նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակներով և պրոյեկտորներով • գրադարանի և ընթերցասրահի կահավորում • տղաների և աղջիկների համար նախատեսված տեխնոլոգիայի դասասենյակներ • Ֆաբլաբ, խելացի լաբորատորիա՝ զինված նորարարական տեխնոլոգիա-ներով, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան ստեղծել «խելացի սարքեր»
4. *Մանկավարժական համակազմը*	
• Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում: • Մանկավարժական և ուսուցչական անձնակազմերը ունեն համապատաս-խան բարձրագույն մանկավարժական որակավորում • Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտա-կան զարգացման անհրաժեշտ կարողություններ • Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ, տիրապետում էժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների • Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ • Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի, և նաև այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատ-րաստումներին	• Համագործակցությունը այլ դպրոց-ների հետ բացակայում է: • Ոչ բոլոր ուսուցիչներն են ցանկանում մասնակցել կամավոր ատեստավորմանը: • Քիչեն այն ուսուցիչները, որ ցանկանում են զբաղվել նաև գիտա-հետազոտական գործունեությամբ:

• Դասալսումների իրականացում, վերլուծություն	

ՀՌՀ-ի «Ուսմունք» դպրոցի ուսուցիչների թիվը՝
ըստ տարիքային խմբերի



5. Աշակերտական համակազմը

• Միջինից բարձր առաջադիմություն • Մասնակցություն ստեղծագործական և սպորտային մրցույթներին • Մասնակցությունը «Կենգուրու», «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին • Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշ • Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին Բուհեր ընդունվելու բարձր ցուցանիշ	• Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշ

ՀՌՀ-ի «Ուսմունք» դպրոցի աշակերտների թիվը՝
ընթացիկ և նախորդ ուստարիների համար



6. Կառավարման և խորհրդակցական մարմինները	
• Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը • Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակ-ցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները: Գործում է Լիդեր հասկացողությունը ըստ որոշակի ուղղությունների: • Ծնողների և աշակերտական խորհուրդի ակտիվ ներգրավվածություն արտադա-սարանական և արտադպրոցական միջոցառումներում • Հաստատության գործունեության թա-փանցիկություն	
7. Համագործակցություն	
• Ռուսերենով ուսուցման կազմակերպ-ման շրջանակներում համագործակ-ցություն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Россотрудничество» դաշնային	• Արտասահմանյան լավագույն դպրոցների հետ համագործակցություն • Միջազգային բուհերի և կառույցների հետ համագործակցություն

գործակալության հայաստանյան գրասենյակի հետ • Փաստաբանների պալատ • Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԱԻՆ-ի, գրադարանների և այլ կառույցների հետ • Ակտիվ համագործակցություն հրատարակչությունների հետ • «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոն	• Քույր դպրոցի գաղափարի ներդրում
8. Կրթության որակը	
• Դպրոցում առկա է ազգային գաղափարախոսության հենքի վրա ուսուցման կազմակերպման մոտիվացիա • Ուսուցումը կազմակերպվում է և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և առարկայական խորացմամբ այլ ծրագրով: • Միջառարկայական համագործակցությանն ու լրացուցիչ կրթության ծրագրերի կիրառում: • Կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների նպատակա-յին իրագործում	
Հնարավորություններ	***Խոչընդոտներ (վտանգներ)***
• Ուսուցչական համակազմի գերակշռող մասի պատրաստակամությունը • Նոր նախաձեռնությունների և դրանց իրագործման համար հնարավորություն ների ստեղծումը • Լրացուցիչ կրթական ծրագրերի իրագործումը • Մեթոդական, մանկավարժահոգեբանական նոր մեթոդների մշակում և կիրառում	• Ֆինանսական գործընկերների (հովանավորների) բացակայությունը • 3-րդ մասնաշենքի և մարզադահլիճի հիմնանորոգման խնդրի լուծման հետ կապված դժվարություններ:

• Տղամարդ ուսուցիչների թվի ընդլայնումը • Ուսուցիչների սոցիալ տնտեսական պայմանների բարելավումը • Միջազգային համագործակցության • ընդլայնումը • Նյութատեխնիկական բազայի համալ-ռումը • Սովորողների առաջընթացի և բարձր առաջադիմության ապահովումը • Կամավոր ատեստավորման մասնակ-ցող, ստեղծագործ ուսուցիչների թվի ավելացումը • Երաժշտական, նկարչական դպրոցների ստեղծումը • Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների օլիմպիական թիմերի ձևավորումը • Սպորտային խմբերի ձևավորում/ֆուտբոլ, վոլեյբոլ, տենիս, լող, գեղասահքի խումբ/ • Ավոտոդպրոցի հիմնում, վարորդական իրավունք ձեռք բերելու նպատակով	

1.3 Նպատակների և խնդիրների սահմանումը

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև առացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրականա կտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակն է պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝ հիմնվելով մի քանի ելակետային դրույթների վրա:

- Յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնել ու ցանկացած ուսումնական նյութ իրեն համար ճիշտ ընտրված մեթոդներով և ժամանակահատվածում:
- Ուսուցչական համակազմը դպրոցի հենքն է:
- Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դառնալ լավագույնը:
- Ուսուցիչը սովորողին պետք է ճանաչի շատ լավ:
- Ծնող-սովորող-ուսուցիչ համագործակցությունը «լավ դպրոցի» հաջողության գրավականն է:

Ելնելով նշված նպատակներից, խնդիրներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից, պետք է՝

- ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար
- սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ

- ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան
- ձևավորել դպրոցի առանձին առարկայական դասասենյակներ, տեսադասարաններ
- արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը
- ներմուծել նոր կրթական տեխնոլոգիաներ, մոդելներ, ՏՀՏ գնահատման գործիքներ
- դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված աշխատակազմով. համատեղ աշխատանքով աջակցել ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցության գործընթացին
- կրթական գործընթացում մշտապես կիրառել ժամանակակից մեթոդներ
- նպաստել սովորողների իրավական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը
- սովորողների մոտ ձևավորել կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք և ձգտում
- ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացը բարելավելու նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ:

Թվարկված խնդիրները լուծելու արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- կապահովվի կրթության հիմնարարությունը, հանրագիտարանությունը և անհատականությունը
- կապահովվի արդիական և որակյալ կրթություն, որի արդյունքում կավելանա հայրենասեր, հաջողակ և մրցունակ շրջանավարտների թիվը
- կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները
- սովորողները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար
- սովորողների մոտ կձևավորվի վերլուծական և քննադատական մտածողություն՝ ապահովելով ազատ քաղաքացու ձևավորումը
- կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական որակները, կմեծանա վերջիններիս գործունեության արդյունավետությունը, կմեծանան

դպրոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից դրական արդյունքներ դրսևորելու ցանկությունը և նախաձեռնողական որակները

- կրթական ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը կնպաստի կրթության արդիականացմանը
- կմեծանա դպրոցի, մանկավարժական կոլեկտիվի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների վստահությունը, և կաճի դպրոցի գործունեության բարելավմամբ շահագրգռված անձանց թիվը:

Վերոնշյալ խնդիրները լուծելիս առաջնորդվել այն համոզմունքով, որյուրաքանչյուր սովորող անհատ է, ուրույն իր տաղանդով և ունակություններով, և որպես այդպիսին, պահանջում է անհատական մոտեցում:

Ուսուցման գործընթացին զուգահեռ պետք է մեծ ուշադրություն դարձնել արտադասարանական և արտադպրոցական ուսուցմանը՝ ստեղծելով պայմաններ սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման, ստեղծագործական, նախաձեռնողական կարողությունների և կիրառական հմտությունների զարգացման համար:

1.4 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

	Գործողություններ, միջոցառումներ	Պատասխանատուները	Ժամանակացույցը
1	Դպրոցի 3-րդ մասնաշենքի և մարզադահլիճի կառուցում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
2	Ուսումնական հաստատության կանաչ տարածքների բարեկարգում:	Տնօրենություն, տեխնիկական անձնակազմ	2024-2029թթ.
3	Դպրոցի մասնակի վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
4	Բուժկետը համալրել անհրաժեշտ սարքավորումներով:	Տնօրենություն, բուժքույր	2024-2025թթ.
5	Առարկայական դասասենյակների ստեղծում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
6	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
7	Ստեղծել բաց ընթերցասրահ դպրոցի տարածքում:	Տնօրենություն, ուսուցիչներ	2025-2026թթ.
8	Ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում. Հրաձգարանի ստեղծում:	ՌՀՀ, տնօրենություն, դասղեկներ, զինղեկ	2024-2029թթ.
9	Դպրոցի սպորտային բազայի հարստացում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
10	«Էկո դպրոց» ծրագրի իրականա–ցում: Արևի ջերմության օգտագործումը որպես էլեկտրաէներգիայի աղբյուր:	ՀՌՌ, Տնօրենություն	2024-2029թթ.
11	Ներկառուցել ռադիոկապ համակարգ:	ՀՌՌ, Տնօրենություն	2024-2029թթ.
12	Նոր համակարգիչների ձեռքբերում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2025թթ.

13	Ուսումնական ծրագրի յուրացման գործնական բնույթ կրող աշխատանքների ընդլայնում:	Տնօրեն, ուսուցիչներ	2024-2029թթ.
14	Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ:	տնօրենություն	2024-2029թթ.
15	Սովորողների մոտ առողջ ապրելակերպի մշակույթ ձևավորելուն ուղղված միջոցառումներ:	տնօրենություն	2024-2029թթ.
16	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ:	Տնօրեն, ուսուցիչներ	2024-2029թթ.
17	Հաստատության ուսումնական միջավայրը հարմարեցնել սովորողների որակյալ ուսուցմանը և ուսումնառության կազմակերպմանը:	տնօրենություն	2024-2029թթ.
18	Գնահատել աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքում ապահովված առաջընթացը, և վերանայել զարգացման ծրագիրը:	տնօրենություն	2023-2029թթ /տարին մեկ անգամ/
19	Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների, նրանց գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:	տնօրենություն	2024-2029թթ.
20	Օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպ–մանը ուղղված անհատական աշխատանքներ :	Տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
21	Առարկայական օլիմպիադաներին ուղղված աշխատանքներ:	Տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
22	«Ուսմունք» դպրոցի հենքի վրա ստեղծել մաթեմատիկա առարկայից օլիմպիական	Տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.

	խումբ՝ տարաբնույթ օլիմպիադաներին մասնակցելու նպատակով:		
23	Պարբերաբար մասնակցել Կովկասյան մաթեմատիկական օլիմպիադային /անդրանիկը՝ 2024թ. մարտին/:	Տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
24	Մասնակցել «Սիրիուս» կրթական կենտրոնի նոյեմբերին կայանալիք մաթեմատիկական դպրոցի մասնակիցների ընտրական մրցույթին:	ՀՌՀ, տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
25	Հայաստանի Մանկավարժա-հոգեբանական Ակադեմիայի և Ադիգեայի համալսարանների հետ համատեղ կազմակերպել ֆիզիկայի և մաթեմատիկայի գարնանային փառատոն՝ «Ուսմունք» դպրոցի հենքի վրա:	ՀՌՀ, տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
26	Լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեության իրականացում:	Տնօրեն, ուսուցչական կազմ, հրավիրված մասնագետներ	2024-2029թթ.
27	Կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
28	Ձևավորել դպրոցի շրջանավարտների խորհուրդ:	Տնօրենություն	2024-2029թթ.
29	Քույր դպրոցի գաղափարի ներդրում:	ՌՀՀ, տնօրենություն	2024-2029թթ.
30	Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:	ՌՀՀ, տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
31	Ուսուցիչների մեջ ձևավորել	Տնօրենություն,	2024-2029թթ.

	սովորողների կարողությունների և հմտությունների ձեռքբերման և իրավական գիտակցությունը ուսուցման գործընթացում բարձրացնելու հմտություններ:	ուսուցիչներ	
32	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատ-վություններ:	ՌՀՀ, տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
33	Աջակցել մանկավարժներին իրենց մեթոդական աշխատանքների արդյունքներին վերաբերող նյութերը մշակելու և տպագրելու գործում, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը և ինքնազարգացմանը:	ՌՀՀ, համապատասխան ամբիոններ, տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
34	Փոխադարձ դասալսումների ակտիվացում:	մ/մ, ուսուցիչներ	2024-2029թթ.
35	Բարոյահոգեբանականմթնոլորտիապահովում, միջավայրիֆիզիկականխոչընդոտներիվերացում, հավասարհնարավորություններ ստեղծում:	տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
36	Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա: Սովորողի դաստիարակություն՝ ազգային բարոյական նորմերով:	տնօրենություն, ուսուցիչներ	2024-2029թթ.
37	Ուժեղացնել և ավելի բովանդակային դարձնել միջառարկայական	մ/մ, ուսուցիչներ	2024-2029թթ.

	համագործակցությունը:		
38	Ուսուցիչների կողմից սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում:	մ/մ, ուսուցիչներ	2024-2029թթ.
39	Յուրաքանչյուր սովորողի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվարություններ ունեցող երեխաների հետ:	տնօրենություն, մ/մ, ուսուցիչներ	2024-2029թթ.
40	Դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր:	տնօրենություն, մ/մ, ուսուցիչներ	2024-2029թթ.
41	Ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները:	Տնօրենություն, դասղեկներ	2024-2029թթ.
42	Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում:	Տնօրենություն, դասղեկներ	2024-2029թթ.
43	Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ:	Տնօրենություն, դասղեկներ	2024-2029թթ.
44	Ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ:	դասղեկներ	2024-2029թթ.

45	Համագործակցություն այլ դպրոցների հետ, հասարակական կազմակերպությունների հետ, միջազգային կազմակերպությունների հետ:	Տնօրենություն, դասղեկներ	2024-2029թթ.
46	Սահմանել զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշներ:	Տնօրեն, կառավարման խորհուրդ, խորհրդակցական մարմիններ	Ծրագրի իրականացման սկզբում և յուրաքանչյուր տարեկան հաշվետվությունից հետո այն վերանայել
47	Ամառային մաթեմատիկական դպրոց	Տնօրենություն	2024-2029 թթ.
48	Բժշկական ապահով. հիմնական ուսուցիչների համար	ՀՌՀ, տնօրենություն	2024-2029 թթ.

1.5 Արդյունքների գնահատման չափանիշներ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլկերպասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը: Տարեկան աշխատանքային պլանով նպատակներն ու խնդիրները սահմանվում են ըստ անելիքների առաջնահերթության: Անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ, տրվում այլ լուծումներ:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,

- դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,
- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի:

Ժամանակի պահանջներից և իրավիճակներից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է ռամշակման և փոփոխման:

1.6 Ռիսկեր

ՌԻՍԿԵՐԸ	ԳՈՐԾԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Նորամուծությունների մերժում	Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
Մոտիվացիայի ցածր մակարդակ	Ներդնել խրախուսանքի համակարգ
Իրազեկվածության ոչ բավարար մակարդակ	Մշտապես ծանոթացնել ոլորտի նորություններին, քաջալերել նախաձեռնողներին
Նախատեսված միջոցառումների իրագործման համար անբավարար ֆինանսական միջոցներ	Գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ
Մշակութային կարծրատիպեր	Կոտրել կարծրատիպեր

1.7 Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ/իրավական, ֆինանսական/

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը թափանցիկ է և հրապարակային:

Դպրոցի նյութա-տեխնիկական բազայի բարելավման, սարքավորումներով և համակարգչային տեխնիկայով հագեցվածության նպատակով յուրաքանչյուր տարի, կախված տվյալ տարվա համար նախատեսված ծրագրերի ծավալից, հատկացվում է դպրոցի համախառն եկամտի մինչև 4 տոկոսը, սակայն ոչ պակաս քան 2 տոկոսը:

Սույն նպատակի համար տվյալ տարում չօգտագործված միջոցները կարող են օգտագործվել հաջորդ տարիներին: